ՀՐԱՎԵՐ N S 1

13.11.2026թ.

2026 թվականի նոյեմբերի 13-ին «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, այսուհետ՝ ԻՀԱ, պաշտոնական կայքում (www.armla.am) հրապարակված հայտարարության հիման վրա տրամադրում ենք Ձեզ սույն հրավերը:

Գնման առարկա է հանդիսանում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» (CTR 439-255) ծրագրի վերջնական արտաքին բովանդակային (ծրագրային) գնահատումը, որի մանրամասները ներկայացված են սույն մրցույթի **Տեխնիկական առաջադրանքում**:

Հայտը պետք է պարունակի հղում սույն հրավերի վրա, գնման առարկայի գինը, կատարման ժամկետը և Տեխնիկական առաջադրանքով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Մասնակցության համար Ձեր կողմից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. **Հայտ**, կցելով սույն մրցույթի **Տեխնիկական առաջադրանքում** նշված փաստաթղթերը:
2. **Հայտարարություն**:
3. Շահերի բախման բացակայության մասին **հավաստագիր**:
4. Հայերեն և անգլերեն լեզուների իմացությունը հաստատող **փաստաթուղթ** (դիպլոմ, վկայական, հավաստագիր, հայտատուի կողմից նախկինում պատրաստված գնահատման հաշվետվության նմուշ կամ այլ փաստաթուղթ):

Մրցույթին կարող են մասնակցել ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը, և իրավաբանական անձինք, որոնք սահմանված ժամկետում կներկայացնեն ամբողջական հայտ:
Մրցույթի հաղթող է ճանաչվում այն հայտատուն, որի հայտը Տեխնիկական առաջադրանքով սահմանված գնահատման չափանիշներով հավաքել է առավելագույն ընդհանուր միավոր:
Հայտում նշված գինը պետք է արտահայտված լինի ՀՀ դրամով և ներառի նաև հարկերն ու այլ պարտադիր վճարումները՝ առանց ԱԱՀ-ի: «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ազատված է ԱԱՀ-ից, որի վերաբերյալ գնման մրցույթում հաղթող անձին կտրամադրվի հարկազատման տեղեկանք:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2026 թվականի նոյեմբերի 20-ը, Երևանի ժամանակով՝ ժամը 17:00-ը:

Գնման մրցույթի գնահատումը կիրականացնի «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահի կողմից ստեղծած «Բյուջեներ

քաղաքացիների համար» ծրագրի վերջնական արտաքին բովանդակային (ծրագրային) գնահատման ծառայության գնման մրցույթի մրցութային հանձնաժողովը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները կարող եք ստանալ ԻՀԱ գնման հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանից՝ զանգահարելով 010 540199 հեռախոսահամարով: Տեխնիկական առաջադրանքով նախատեսված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար դրանք անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային փոստով՝ info@armla.am էլեկտրոնային հասցեի միջոցով:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այցելելով ծրագրային կայքը հետևյալ հասցեով https://budgets.am :

Հարգանքով՝
«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր